ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2017թ.

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մ.Մարտիրոսյանի՝ ՀՀ ԳԱԱ 2016թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցումը, արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ Նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվող գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես նոր գիտական արդյունքների ստացմանը, այնպես էլ հանրապետությունում ՀՀ ԳԱԱ դերի և տեղի ամրապնդմանը:

2016թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հետազոտությունների գիտական բարձր մակարդակ: Հրատարակվել է 178 մենագրություն, 24 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 1991 հոդված (831-ն արտասահմանում), 589 թեզիս (246-ն արտասահմանում): 2016թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները կատարել են գիտական աշխատանքներ 6 նպատակային, 47 բազային և 108 թեմատիկ ծրագրերով:

Ինչպես վերջին մի քանի տարիների ընթացքում, այնպես էլ հաշվետու տարում միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը համարվել է ՀՀ ԳԱԱ Նախագահության գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը: Միջազգային կապերի շնորհիվ համակարգի գիտնականները իրենց գիտական ձեռքբերումները ներկայացրել են միջազգային գիտական հանրությանը համատեղ ծրագրերի շրջանակներում, օգտվել են ժամանակակից գիտական խոշոր կենտրոնների ինֆրակառուցվածքից, մասնակցել են միջազգային գիտատեխնիկական ծրագրերին:

Ակադեմիան ակտիվորեն համագործակցել է հանրապետության բուհերի հետ, համատեղ գործող գիտական և ուսումնական կառույցներում իրականացվել են համատեղ գիտական հետազոտություններ:

Ելնելով վերը շարադրվածից՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը որոշում է հավանություն տալ ՀՀ ԳԱԱ գործունեությանը՝ նշելով հետևյալը.

- Ֆինանսական միջոցների սղության պատճառով դեռևս չի հաջողվել իրականացնել համակարգի կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգման աշխատանքները:
- Վատթար վիճակում է շարունակում մնալ ինստիտուտների գիտատեխնիկական բազան: Գիտական կազմակերպությունները հնարավորություն չեն ունեցել ձեռք բերել ժամանակակից գիտատեխնոլոգիական սարքավորումներ:
- Գիտաշխատողների աշխատավարձը ծայրահեղ ցածր է, ինչը երիտասարդ կադրերի արտահոսքի հիմնական պատճառն է: Այս հարցում դրական դեր կարող է ունենալ գիտական կոչումների համար գիտնականների կենսաթոշակին հավելավճարի ավելացումը. դա մասամբ կխթանի կենսաթոշակային տարիքի գիտնականների փոխարինմանը երիտասարդ մասնագետներով:

Միևնույն ժամանակ, տարեկան ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով որոշում է առաջիկայում իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ստեղծել հանձնաժողով, որը «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ կհամապատասխանեցնի 2015թ. դեկտեմբերին ուժի մեջ մտած նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությանը: Դա վերաբերում է նաև ՀՀ ԳԱԱ կանոնադրությանը:
- Վերանայել գիտական կազմակերպությունների ղեկավար պաշտոններում փոխարինողների ցուցակները՝ ընդգրկելով երիտասարդ գիտնականներին:
- Գտնել ճանապարհներ ինստիտուտների ինֆրակառուցվածքները ժամանակակից գիտատեխնիկական միջոցներով համալրելու համար, ինչն էապես կավելացնի արտաբյուջետային՝ դրամաշնորհային և պայմանագրային աշխատանքների ծավալները:
- Զարգացնել և ընդլայնել համագործակցությունը հայրենական և արտերկրի գիտական կազմակերպությունների և գիտնականների հետ:
- ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերում քննարկել ԳԱԱ բաժանմունքների ընդհանուր ժողովներում բարձրացրած կարևորագույն հարցերը:
- Հաշվի առնելով ՀՀ-ում կիրառական հետազոտությունների ակտիվացման գործընթացը՝ հանձնարարել ՀՀ ԳԱԱ Նախագահությանը ավարտել իր աշխատակազմում ինովացիոն քաղաքականությունը իրագործող միավորի ստեղծման աշխատանքները:

- Ստեղծել նոր միավոր, որը կզբաղվի ռազմական արդյունաբերության համակարգին առնչվող հարցերով:
- Իրականացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման գործընթացը՝ համաձայն ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից հաստատված չափորոշիչների:
- Մշակել կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման ռազմավարական ծրագիր 2017-2020թթ. համար:
- Դիմել ՀՀ կառավարությանը հետևյալ հարցերով.

1. բարձրացնել գիտաշխատողների աշխատավարձը,
2. կատարելագործել հարկային դաշտը գիտատեխնիկական բնագավառում,
3. գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատելու ն փուլ առ փուլ կենսաթոշակին հավելելու համար:

Հանձնարարել ՀՀ ԳԱԱ բաժանմունքներին.

- խթանել ՀՀ ԳԱԱ գիտական հանդեսների աշխատանքը,
- առավել արդյունավետ դարձնել ակադեմիական գիտական կազմակերպությունների միջազգային համագործակցությունը արտասահմանյան կենտրոնների և գիտնականների, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ սփյուռքահայ անդամների հետ,
- հնարավորինս ակտիվացնել բաժանմունքի կազմում ընդգրկված գիտական կազմակերպությունների միջազգային դրամաշնորհներին մասնակցելու գործընթացը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ